ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԲԵԹՂԵՀԷՄԻ ԱՍՏՂԸ·

«Եւ երբ որ Յիսուս ծնուեց Բեթղեհէմում, ահա մոգեր եկան արևելքից և ասացին, տեսանք նրա աստղը արևելքում և եկանք երկրպագել նրան։ Եւ ահա այն աստղը, որ տեսան արևելքում, նրանց առաջից գնում էր և եկաւ այն տեղի վրայ կանգնեց, ուր էր մանուկը։ Եւ երբ որ նրանք տեսան այն աստղը՝ մեծ ուրախութիւնով ուրախացան շատ։ Մատ. Բ. 1—11։

Ի՛նչ զմայլելի հակադրութիւնների գեղեցիկ մի ամբողջութիւն, մի համերգ ենք դիտում մենք Բեթղեհէմում Քրիստոսի ծննդեան ժամին. աշխարհի Փրկիչը ծնւում է, բայց նա մարդավայել ինքնանելու մի տեղ չունի, նրան վիճակուել է անասունների մի քարայր և նորածին յաւիտենական Թագաւորը խանձարուրով պատած դրուել է մսուրի մէջ, սակայն այդտեղ եկել են նրան երկրպագելու թագաւորներ, իմաստուններ. այնտեղ նրան մատուցանում են ոսկեղէն, թանգագին ընծաներ։ Միւս կողմից հասարակ պարզ հովիւներն են նրան ողջունում. վերևից հնչում է երկնային երգեհոնը, փառահեղ, լուսապարար հրեշտակների ցնծութեան երգը և փառաբանութիւնը, իսկ այդ ամենի վրայ երկնակամարից ցոլում է փայլուն, գիւթիչ և գրաւիչ պայծառ աստղը, Բեթղեհէմի անանց, չնաշխարհիկ աւետաբերը։

Բոլորը գեղեցիկ, բոլորը խորհրդաւոր, բոլորն ուսանելի և կրթիչ, այստեղ երկինքը միացած է երեւում երկրի հետ, այդտեղ ծագում է նոր կեանքի հաւատը, յոյսը, այստեղ փթթում են աշխարհում դեռ չը լսուած նոր առաքինութիւնների ծաղիկները՝ խոնարհութիւն և

հեղութիւնը, ինչպէս ասում է, «ես որի մէջ կը բնակուիմ, եթէ ոչ հեղերի և խոնարհների մէջ»։

Բեթղեհէմի աստղը թող լինի մի նշանաբան յիշեցնող մեր կեանքի կէտ նպատակը, մեզ ոգևորող, մեր միտքը լուսաւորող, մեզ միշտ ի Քրիստոս արթուն պահող նշանաբանը։ Նրանով կը յիշենք ճաճանչափայլ մարդը, մարդկութեան նոր ծնած արեգակ Փրկիչը, արևելեան մոգերի փառահեղ երկրպագութիւնը, գիշերապահ հովիւների զմայլանքը, երբ նրանք տեսան զուարթուն հրեշտակների լուսաշաղախ գունդերը երգելիս, «Փառք բարձրերում Աստծուն, երկրի վրայ խաղաղութիւն, մարդկանց մէջ իրար հետ սէր բարեհաճութիւն»։

Ս. Աւետարանի մէջ նկարագրուած ամեն մի դէպք և ամեն մի խօսք պիտի խոր, անջնջելի տպաւորութիւն գործէ մեր վրայ, որ մենք ամբողջովին համակուենք նրանով և ամբողջապէս լուսաւորուենք։ ոչ մի մութ կէտ չը մնայ մեզանում։ Ս. Աւետարանի անգին մարգարիտները յումպէտս չը պիտի մնան, այլ պիտի մեզ պճնեն և զարդարեն. սուրբ Փրկչի հոգեզմայլ ծնունդը իւր հրաշագեղ տեսարաններով, Փրկչի երկրաւոր կեանքի յաղթանակը, քարոզութիւնների, բժշկութիւնների, արտատուչոր խաչի, փառաւորագունեղ յարութեան, վերջագոյն համբարձման բոլոր մանրամասնութիւնները պիտի մեզ քաջ ծանօթ և ընտանի լինեն, վասն զի արժան և վայել է, որ քրիստոնեան կատարեալ քրիստոնեայ լինի և ոչ թէ թերակատարկամ անուանական։

Երբ մենք միշտ յիշենք Բեթղեհէմի աստղը, նրա հետևող բոլոր անցքերը, և իրողութիւններն էլ շղթայի պէս կը բացուեն մեր հոգևոր տեսութեան առաջ ծաւալագիտակի նման, մեզ կը զմայլեցնեն, մեզ կը կրթեն և մեր վրայ կը կատարուի Փրկչի գալստեան համայն մարդկութեան աստուածարման խորհուրդը։

Նիկողայոս վրդ. Տ. Աւետիսեան